ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«04» մարտի 2025թ. ՄՈ/291 -Ա

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայսատանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայսատանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի և 18-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 16-ի N ՄՈ/602-Ա որոշման հավելվածի 6.1.1-ին կետի պահանջը.

որոշում եմ՝

1. 2025 թվականի ապրիլի 15-ից 16-ը Հայասատանի Հանրապետության Արմավիրի մարզպետի ղեկավարությամբ Հայասատանի Հանրապետության Արմավիրի մարզում (այսուհետ՝ մարզ) անցկացնել «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն (այսուհետ՝ ՀՇՈ):

2. ՀՇՈ-ի նախապատրաստման և անցկացման նպատակով նշանակել՝

1) ՀՇՈ-ի ղեկավարի տեղակալ՝ Հայասատանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալին (Գոռ Հովհաննիսյան).

2) ՀՇՈ-ի ղեկավարման շտաբի պետ՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ՀՀ ՆԳՆ ՓԾ) Արմավիրի

մարզային փրկարարական վարչության պետին (փրկարար ծառայության գնդապետ Հովհաննես Մարգարյան):

3. Հաստատել՝

1) ՀՇՈՒ-ի ղեկավարման խմբի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.

2) ՀՇՈՒ-ի ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն հավելված N 2-ի.

3) ՀՇՈՒ-ի միջնորդական խմբի կազմը՝ համաձայն հավելված N 3-ի:

4. ՀՇՈ-ին ընդգրկել՝

1) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին.

2) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի տարահանման հանձնաժողովին.

4) ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչությանը.

5) «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը.

6) «Մեծամորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը.

7) Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության Արմավիրի օդերևութաբանական կայանին.

8) Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Նորավան, Մայիսյան, Մեծամոր համայնքի Մրգաշատ, Արտաշար, Ակնալիճ և Խոյ համայնքի Արշալույս բնակավայրերի ղեկավար կազմերին.

5. ՀՇՈ-ի ղեկավարի տեղակալին՝ ՀՇՈ-ի նախապատրաստման և անցկացման համար ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներ:

6. ՀՇՈ-ի ղեկավարման շտաբի պետին՝

1) մինչև 2025 թվականի մարտի 16-ը կազմել և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի հաստատմանը ներկայացնել ՀՇՈՒ-ի նախապատրաստման և անցկացման փաստաթղթերի փաթեթը.

2) կազմակերպել ՀՇՈ-ի մասնակիցների նախապատրաստումը ուսումնավարժության անցկացմանը՝ համաձայն հաստատված օրացուցային պլանի.

3) ՀՇՈ-ի մասնակիցներին ցուցաբերել անհրաժեշտ մեթոդական օգնություն.

4) ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների պլան»-ի թիվ 2 հավելվածը՝ «ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Արմավիրի մարզի բնակչության պաշտպանության» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի ՀԱԷԿ-ի վթարային հակազդման» պլանները.

5) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

6) ապահովել համագործակցությունը ուսումնավարժությանը ներգրավված մասնակիցների միջև.

7) ճշտել համայնքների և կազմակերպությունների կողմից հատկացվող ուժերն ու միջոցները և դրանց օգտագործման կարգը.

8) 2025 թվականի ապրիլի 11-ին զեկուցել ՀՇՈՒ-ի անցկացմանը պատրաստ լինելու մասին:

7. ՀՇՈՒ-ի մասնակիցներին՝

1) ՀՇՈՒ-ի նախապատրաստման հարցերով սերտորեն համագործակցել ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

2) Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության հետ ճշգրտել «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հայկական ատոմային էլեկտրակայանի վթարային հակազդման» և «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզային տարահանման» պլաններով նախատեսված միջոցառումները.

3) գործնական միջոցառումներին ներգրավվող ուժերը համալրել հաշվեցուցակային գույքով և հանդերձանքով.

4) գործնական միջոցառումների անցկացման ընթացքում խստագույնս պահպանել անվտանգության կանոնները.

5) ՀՇՈՒ-ի ընթացքում պատրաստ լինել ներկայացնել համապատասխան զեկույցներ:

8. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

9. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի մարտի «04»-ի
ՆՄՈ/291 -Ա որոշման

ԿԱԶՄ

2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ 16-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԽՄԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1	Արգիշտի Մեխակյան	ՀՀ Արմավիրի մարզպետ՝ ուսումնավարժության ղեկավար
2	Գոռ Հովհաննիսյան	ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ, մարզի տարահանման հանձնաժողովի նախագահի տեղակալ
3	Հովհաննես Մարգարյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ

Գլխավոր քարտուղար **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.03.2025 14:34:58 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N 2
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի մարտի « 04 »-ի
ՆՄՈ/291 -Ա որոշման

Կ Ա Զ Մ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ 16-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

Հ/հ	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը
1.	Հովհաննես Մարգարյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝ ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ
2.	Մուշեղ Պետրոսյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ՝ գործնական միջոցառումների կազմակերպման խմբի ղեկավար
3.	Գարնիկ Մկրտչյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ պետ՝ խաղարկման և վերլուծության խմբի ղեկավար
4.	Գառնիկ Ղուկասյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ
5.	Վահան Սրեյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ԲՊԲ ավագ հրահանգիչ, խաղարկման և վերլուծության խմբի անդամ
6.	Լյովա Պողոսյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ հրահանգիչ, գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ
7.	Վահան Մկրտչյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության Վաղարշապատի ՀՓՋ հրամանատար, գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ
8.	Արման Ավետիսյան	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության Արմավիրիի ՀՓՋ հրամանատարի տեղակալ, գործնական միջոցառումների կազմակերպման խմբի անդամ

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.03.2025 14:35:43 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023

Հավելված N 3
ՀՀ Արմավիրի մարզպետի
2025 թվականի մարտի « 04 »-ի
ՆՄՈ/291 -Ա որոշման

ԿԱԶՄ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ 16-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԱՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Հ/հ	Ուսումնավարժության մասնակիցներ	Միջնորդներ	
		Զբաղեցրած պաշտոնը	Անուն Ազգանուն
1.	Արմավիրի մարզի տարահանման հանձ-նաժողով, Արմավիրի մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողով	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի ավագ հրահանգիչ	Սևակ Հովհաննիսյան
2.	«Արմավիրի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ, «Մեծամորի բժշկական կենտրոն» ՊՓԲԸ, Արմավիրի ԳԳՄ, «ՀԷՑ» ՓԲԸ Մուսալեռ մասնաճյուղի Արմավիրի ՀԷՑ «Վեոլիա ջուր»ՓԲԸ,	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ հրահանգիչ	Ավետիք Հարությունյան
3.	ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՔՈԳՎ Արմավիրի մարզային վարչություն, Արմավիր համայնքի Նորավան, Մայիսյան, Մեծամոր համայնքի Մրգաշատ, Արտաշար, Ակնալիճ, Խոյ համայնքի Արշալույս բնակավայրեր	ՀՀ ՆԳՆ ՓԾ Արմավիրի մարզային փրկարարական վարչության ՃԿԿ ավագ հրահանգիչ	Արտակ Առաքելյան

Գլխավոր քարտուղար **Ա. Հովհաննիսյան**

Недействительная подпись

VERIFIED OCSP 04.03.2025 14:36:50 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023